ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
21 ապրիլի 2026 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 6-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 3-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 56 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Սուրեն Գրիգորյանը և Լևոն Հովհաննիսյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Վիլեն Արևշատյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Կամո Արեյանը, Արփենիկ Մուրադյանը, Սոնա Թևանյանը և Արման Լազրյանը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Ստեփանյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը, բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը, լրատվության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Օֆելյա Սիմոնյանը, առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետ Արմեն Առաքելյանը, ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը, եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Հակոբյանը, քաղաքաշինական հատուկ ծրագրերի վարչության պետ Ալիկ Վարդազարյանը, մարդկային ռեսուրսների կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Լուսինե Սարգսյանը, երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի տեղակալ Վահե Գրիգորյանը, քարտուղարության պետ Լիլիթ Յավրյանը և Երևանի քաղաքապետի մամուլի քարտուղար Արտյոմ Կարապետյանը:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով՝ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը առաջարկեց, որ Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի հերթական նիստը գումարել 2026 թվականի մայիսի 7-ին, ժամը 10.00-ին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 59, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Առաջարկն ընդունվեց միաձայն:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ Երևանի ավագանու 2026թ. ապրիլի 21-ի օրակարգի նախագծի հետևյալ չզեկուցվող հարցերը հանում է քննարկումից.

2-րդ՝ «Լևոն Հայրապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին»,

3-րդ՝ «Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի ապրիլի 12-ի N85-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»,

4-րդ՝ «Կոստան Զարյանի դիմաքանդակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին»,

17-րդ՝ «Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Քըրք Քըրքորյանի փողոց հ.33 հասցեում մանկապարտեզի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին»,

18-րդ՝ «Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Մալխասյանց փողոց 1-ին նրբանցք 1 բնակելի տուն, 1/1 բնակելի տուն և 3 հասցեներում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին»,

19-րդ՝ «Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ. Հովսեփյան փողոց հ. 66 և 26/7 հողամաս հասցեներում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին»,

20-րդ՝ «Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Քըրք Քըրքորյանի փողոց հ.23/20 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին»,

22-րդ՝ «Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի 2-րդ թաղամաս հ.7/1 հասցեում մանկապարտեզի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին»:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ օրակարգի չզեկուցվող 10-րդ՝ «Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին», 13-րդ՝ «Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղի հ.3/1 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» և 15-րդ՝ «Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ի.Գասպարյան փողոց հ.34 հասցեում բեռնային համալիրի ընդլայնման՝ պահեստի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» նախագծերի վերաբերյալ գլխադասային՝ քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Տիգրան Ավինյանը հայտնեց, որ օրակարգի չզեկուցվող 10-րդ՝ «Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» հարցը հանում է օրակարգի նախագծից:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի ավագանու «Հանրապետություն» և «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունների անդամներն իրենց կողմից ներկայացված հետևյալ հարցերը հանում են քննարկումից.

43-րդ՝ «Երևան քաղաքում Արսեն Հակոբյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին», նախագծի հեղինակ՝ «Հանրապետություն» խմբակցություն,

44-րդ՝ «Երևան քաղաքում Գրիգոր Խանջյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին», նախագծի հեղինակ՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Նուարդ Վարդանյան,

45-րդ՝ «Երևան քաղաքում Հենրիկ Սիրավյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին», նախագծի հեղինակ՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Նուարդ Վարդանյան,

46-րդ՝ «Երևան քաղաքում Համլետ Թամազյան անվամբ փողոց անվանակոչելու մասին», նախագծի հեղինակ՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Նուարդ Վարդանյան,

47-րդ՝ «Երևան քաղաքում Էդուարդ Աբաջյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին», նախագծի հեղինակ՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Նուարդ Վարդանյան:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը ներկայացրեց 2026 թվականի ապրիլի 21-ի հերթական նիստի օրակարգի նախագիծը՝

Երևանի ավագանու 2026 թվականի ապրիլի 21-ի նիստի օրակարգում ընդգրկվել է 37 հարց, որից 2-ից 35-րդ հարցերը չզեկուցվող են.

1. Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
3. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
4. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին: (Չզեկուցվող)
5. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին: (Չզեկուցվող)
6. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին: (Չզեկուցվող)
7. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի h.11/11 հասցեում դպրոցի նոր մասնաշենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

8. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Թամանյանի փողոց հ.10/1 հասցեում «Կասկադ մշակութային հանգույց» ճարտարապետական նախագծի իրականացման հիման վրա մշակութային կենտրոնի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
9. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղի հ.3/1 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
10. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Թևոսյան փողոց հ.1 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
11. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ի.Գասպարյան փողոց հ.34 հասցեում բեռնային համալիրի ընդլայնման՝ պահեստի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
12. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Մյասնիկյան պողոտա հ.26 հասցեում բենզալցակայանի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
13. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտասի պողոտայի և Վազգեն Ա Վեհափառի փողոցի մայթերի (երկկողմանի և ողջ երկայնքով) բարեկարգման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
14. Գույք նվիրելու մասին: (Զեկուցվող)
15. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N463-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)
16. Փիրումյանների փողոցի հ.2/4 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Զեկուցվող)
17. Գ.Հովսեփյան փողոցին հարող տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Զեկուցվող)
18. Գ. Հովսեփյան փողոցի հեռուստաաշտարակին հարող տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Զեկուցվող)
19. Մյասնիկյան պողոտա հ. 53/8 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Զեկուցվող)
20. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Զեկուցվող)
21. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Զեկուցվող)
22. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Զեկուցվող)
23. Երևան համայնքի սեփականություն համարվող Զաքարիա Քանաքեռցի փողոց հ. 54/6 շենքի հ. 6 բնակարանն անհատույց օտարելու մասին: (Զեկուցվող)
24. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N482-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)

25. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N249-Ն և Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N480-Ն որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: (Չզեկուցվող)
26. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N718-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
27. «ԱՐԻԱՆ ՄՈԹՈՐՍ» ՍՊ ընկերության կողմից Երևանի քաղաքապետարան ներկայացված ներդրումային ծրագրին հավանություն տալու, ներդրումային ծրագրով նախատեսված և կառուցված անշարժ գույքից 4018.3 քմ մակերեսով տարածքը և անշարժ գույքի զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի համապատասխան բաժնեմաս նվիրելու մասին: (Չզեկուցվող)
28. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N481-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Չզեկուցվող)
29. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N690-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
30. Երևան քաղաքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ սահմանելու և համայնքի բյուջեից վճարում կատարելու մասին: (Չզեկուցվող)
31. Աղբահանության վճարի նկատմամբ հաշվարկված տույժերի վճարման պարտականությունից ազատելու մասին: (Չզեկուցվող)
32. Երևան քաղաքի Տիտոգրադյան փողոցն անվանափոխելու մասին: (Չզեկուցվող)
33. Երևան քաղաքում Կոստան Զարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
34. Երևան քաղաքում Մխիթար Սեբաստացու անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
35. Երևան քաղաքում Աշոտ Սաթյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
36. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
37. Երևան քաղաքում փողոց անվանափոխելու մասին (Զեկուցվող):

Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանն առաջարկեց չզեկուցվող՝ «Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Թամանյանի փողոց հ.10/1 հասցեում «Կասկադ մշակութային հանգույց» ճարտարապետական նախագծի իրականացման հիման վրա մշակութային կենտրոնի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» և «Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N463-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» հարցերը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Քվեարկություն.

Կողմ՝ 26, դեմ՝ 28, ձեռնպահ՝ 4

Առաջարկը չընդունվեց:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ Երևանի ավագանու 2026 թվականի ապրիլի 21-ի հերթական նիստի օրակարգի նախագծում ընդգրկված է 37 հարց, որից՝ 2-ից 35-րդ հարցերը չզեկուցվող են:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտարարեց, որ քվեարկության է դրվում Երևանի ավագանու 2026 թվականի ապրիլի 21-ի հերթական նիստի օրակարգի նախագիծը.

1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 38, դեմ՝ 19, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 18.06.2009թ. N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 5-րդ ենթակետը՝ առաջնահերթ քվեարկության են դրվում օրակարգում ընդգրկված չզեկուցվող՝ 2-ից 35-րդ հարցերը:

2. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N41-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Առևտրի, ծառայությունների և գովազդի վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	Առևտրի, ծառայությունների և գովազդի վարչություն				
1	վարչության պետ	1	697,000		697,000
2	վարչության պետի տեղակալ	2	561,000		1,122,000
3	գործավար	1	248,200		248,000
-	**Առևտրի և ծառայությունների բաժին**				
4	բաժնի պետ	1	408,000		408,000
5	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
6	առաջատար մասնագետ	4	282,200		1,128,800
7	առաջին կարգի մասնագետ	4	272,000		1,088,000

-	**Գովազդի բաժին**				
8	բաժնի պետ	1	408,000		408,000
9	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
10	առաջատար մասնագետ	2	282,200		564,400
11	առաջին կարգի մասնագետ	2	272,000		544,000
12	արտաքին ձևավորման դիզայներ	2	410,000		820,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**24.0**			**8,184,400**

»,

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն				
1	վարչության պետ	1	697,000		697,000
2	վարչության պետի տեղակալ	1	561,000		561,000
-	**Երեխաների պաշտպանության բաժին**				
3	բաժնի պետ	1	408,000		408,000
4	գլխավոր մասնագետ - սոցիալական աշխատող	1	289,000		289,000
5	գլխավոր մասնագետ - իրավաբան	1	289,000		289,000
6	գլխավոր մասնագետ - հոգեբան	1	289,000		289,000
7	առաջատար մասնագետ - սոցիալական աշխատող	1	282,200		282,200
8	առաջատար մասնագետ	1	282,200		282,200
9	առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
-	**Սոցիալական պաշտպանության բաժին**				
10	բաժնի պետ	1	408,000		408,000
11	գլխավոր մասնագետ - սոցիալական աշխատող	1	289,000		289,000
12	գլխավոր մասնագետ - իրավաբան	1	289,000		289,000
13	գլխավոր մասնագետ - հոգեբան	1	289,000		289,000
14	առաջատար մասնագետ	2	282,200		564,400
15	առաջատար մասնագետ - սոցիալական աշխատող	1	282,200		282,200
16	առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**17.0**			**5,763,000**

»,

3) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	Մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչություն				
1	վարչության պետ	1	697,000		697,000
2	վարչության պետի տեղակալ	1	561,000		561,000
3	գլխավոր մասնագետ	1	323,000		323,000
4	առաջատար մասնագետ	1	289,000		289,000
5	առաջին կարգի մասնագետ	3	282,200		846,600
6	պահեստի պատասխանատու	2	289,000		578,000
7	վարորդ	1	289,000		289,000
8	վարորդ	8	272,000		2,176,000
9	վարորդ	35	255,000		8,925,000
10	տեխնիկական սպասարկող	1	255,000		255,000
11	բանվոր	2	255,000		510,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**56.0**			**15,449,600**

»,

4) «Ի. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Մարդկային ռեսուրսների կառավարման վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	Մարդկային ռեսուրսների կառավարման վարչություն				
1	վարչության պետ	1	697,000		697,000
2	վարչության պետի տեղակալ	1	561,000		561,000
3	գլխավոր մասնագետ-բարեվարքության հարցերով կազմակերպիչ	1	323,000		323,000
4	գլխավոր մասնագետ	5	323,000		1,615,000
5	առաջատար մասնագետ	4	289,000		1,156,000
6	առաջին կարգի մասնագետ	1	282,200		282,200
	ԸՆԴԱՄԵՆԸ	**13.0**			**4,634,200**

»,

5) «Ի. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Քարտուղարություն» գլխի «14, քաղաքացիական կացության ակտերի գրանցման սպասարկման կենտրոնի առաջին կարգի մասնագետ, 17, 132,300, 2,249,100» տողը ճանաչել ուժը կորցրած, իսկ «Ընդամենը» տողում «90.0» և «24,101,580» թվերը փոխարինել համապատասխանաբար «73.0» և «21,852,480» թվերով,

6) «Ի. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան»» տողում «825.0» և «275,651,645» թվերը փոխարինել համապատասխանաբար «812.0» և «274,695,145» թվերով,

7) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «3.1. Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխում.

ա) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» մասի «10. տեխնիկական աշխատող» տողում «28» և «5,600,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «38» և «7,600,000» թվերով,

բ) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» մասի «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում «47.0» և «9,680,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «57.0» և «11,680,000» թվերով,

գ) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «134.0» և «37,121,400» թվերը փոխարինել համապատասխանաբար «144.0» և «39,121,400» թվերով,

8) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «3.2. Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխում.

ա) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» մասի «10. տեխնիկական աշխատող» տողում «12» և «2,400,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «22» և «4,400,000» թվերով,

բ) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» մասի «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում «30.0» և «6,303,200» թվերը փոխարինել համապատասխանաբար «40.0» և «8,303,200» թվերով,

գ) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «91.0» և «26,414,200» թվերը փոխարինել համապատասխանաբար «101.0» և «28,414,200» թվերով,

9) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «3.3. Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխում.

ա) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» մասի «10. տեխնիկական աշխատող» տողում «33» և «6,600,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «39» և «7,800,000» թվերով,

բ) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» մասի «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում «54.0» և «11,033,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «60.0» և «12,233,600» թվերով,

գ) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «164.0» և «44,846,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «170.0» և «46,046,600» թվերով,

10) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «3.4. Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխում.

ա) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» մասի «10. տեխնիկական աշխատող» տողում «12» և «2,400,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «20» և «4,000,000» թվերով,

բ) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» մասի «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում «27.0» և «5,660,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «35.0» և «7,260,600» թվերով,

գ) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «77.0» և «22,116,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «85.0» և «23,716,600» թվերով,

11) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «3.5. Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխում.

ա) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» մասի «10. տեխնիկական աշխատող» տողում «18» և «3,600,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «30» և «6,000,000» թվերով,

բ) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» մասի «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում «39.0» և «8,033,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «51.0» և «10,433,600» թվերով,

գ) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «128.0» և «35,866,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «140.0» և «38,266,000» թվերով,

12) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «3.6. Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխում.

ա) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» մասի «11. տեխնիկական աշխատող» տողում «49» և «9,800,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «57» և «11,400,000» թվերով,

բ) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» մասի «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում «73.0» և «14,954,400» թվերը փոխարինել համապատասխանաբար «81.0» և «16,554,400» թվերով,

գ) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «215.0» և «57,974,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «223.0» և «59,574,600» թվերով,

13) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «3.7. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխում.

ա) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» մասի «10. տեխնիկական աշխատող» տողում «28» և «5,600,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «37» և «7,400,000» թվերով,

բ) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» մասի «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում «49.0» և «10,033,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «58.0» և «11,833,600» թվերով,

գ) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «151.0» և «41,640,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «160.0» և «43,440,000» թվերով,

14) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «3.8. Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխում.

ա) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» մասի «10. տեխնիկական աշխատող» տողում «29» և «5,800,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «39» և «7,800,000» թվերով,

բ) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» մասի «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում «51.0» և «10,410,400» թվերը փոխարինել համապատասխանաբար «61.0» և «12,410,400» թվերով,

գ) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «145.0» և «39,769,400» թվերը փոխարինել համապատասխանաբար «155.0» և «41,769,400» թվերով,

15) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «3.9. Նորք Մարաշ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխում.

ա) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» մասի «10. տեխնիկական աշխատող» տողում «2» և «400,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «7» և «1,400,000» թվերով,

բ) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» մասի «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում «17.0» և «3,660,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «22.0» և «4,660,600» թվերով,

գ) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «55.0» և «16,771,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «60.0» և «17,771,000» թվերով,

16) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «3.10. Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխում.

ա) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» մասի «8. տեխնիկական աշխատող» տողում «4» և «800,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «6» և «1,200,000» թվերով,

բ) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» մասի «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում «16.0» և «3,462,200» թվերը փոխարինել համապատասխանաբար «18.0» և «3,862,200» թվերով,

գ) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «43.0» և «13,312,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «45.0» և «13,712,000» թվերով,

17) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «3.11. Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխում.

ա) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» մասի «10. տեխնիկական աշխատող» տողում «30» և «6,000,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «38» և «7,600,000» թվերով,

բ) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» մասի «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում «51.0» և «10,433,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «59.0» և «12,033,600» թվերով,

գ) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «154.0» և «42,312,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «162.0» և «43,912,000» թվերով:

18) «ԱՄԲՈՂՋԸ՝ վարչական շրջաններ» տողում «1,476.0» և «411,475,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «1,564.0» և «429,075,600» թվերով,

19) «ԸՆԴԱՄԵՆԸ՝ առանձնացված ստորաբաժանումներ» տողում «1,570.0» և «440,154,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «1,658.0» և «457,754,600» թվերով,

20) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «2,395.0» և «715,806,245» թվերը փոխարինել համապատասխանաբար «2,470.0» և «732,449,745» թվերով:

2. Սույն որոշումը համայնքային ծառայության հաստիքների մասով ուժի մեջ է մտնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության

տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

3. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 483-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-5 հավելվածների:

4. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 483-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից հատկացնել 30,000.0 հազար դրամ՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ կապիտալ դրամաշնորհներ» հոդվածով:

2. Որոշման NN 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-3 հավելվածների:

5. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ–1.Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված կազմակերպություններին՝ 2026 թվականի ընթացքում շարունակել հավելվածում նշված տարածքներում և սահմանված պայմաններով նախորդ տարիներին կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղիների շահագործումը:

6. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ–1.Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությանը՝ սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

7. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի հ.11/11 հասցեում դպրոցի նոր մասնաշենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ԱՅԲ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ» հիմնադրամի կողմից ներկայացված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի հ. 11/11 հասցեում դպրոցի նոր մասնաշենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

8. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Թամանյանի փողոց հ.10/1 հասցեում «Կասկադ մշակութային հանգույց» ճարտարապետական նախագծի իրականացման հիման վրա մշակութային կենտրոնի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ–1. «ՋԻ Թ ԻԲԻ ԴԻՎԵԼՈՓՄԵՆԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Թամանյանի փողոց հ. 10/1 հասցեում «Կասկադ մշակութային հանգույց» ճարտարապետական նախագծի իրականացման հիման վրա մշակութային կենտրոնի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

9. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղի հ.3/1 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ԱԿ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղի հ.3/1 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

10. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Թևոսյան փողոց հ.1 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ՈՒՌԲԱՆ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Թևոսյան փողոց հ.1 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել անհամաձայնություն, հետևյալ պատճառաբանությամբ.

1) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի N 04-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերի» (այսուհետ՝ Նորմեր) 241-րդ կետի համաձայն՝ տարբեր նշանակության կանաչապատ տարածքների տեսակարար կշիռը բնակավայրի ընդհանուր տարածքի նկատմամբ պետք է լինի 40%-ից ոչ պակաս, իսկ բնակելի (բնակեցման) տարածքի սահմաններում՝ 25%-ից ոչ պակաս: Նախաձեռնողի կողմից ներկայացված էսքիզային նախագծի համաձայն հողամասի մակերեսը կազմում է 9384,85 մ^2, կանաչապատման մակերեսը՝ 4701,8 մ^2, սակայն էսքիզային նախագծի ուսումնասիրությունից պարզվել է, որ կանաչապատ տարածքի մակերեսը կազմում է 3200 մ^2 կամ 34%, այսինքն տվյալ նախատեսվող գործունեության դեպքում չի պահպանվում Նորմերով սահմանված պահանջը:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

11. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ի.Գասպարյան փողոց հ.34 հասցեում բեռնային համալիրի ընդլայնման՝ պահեստի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ի.Գասպարյան փողոց հ.34 հասցեում բեռնային համալիրի ընդլայնման՝ պահեստի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

12. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Մյասնիկյան պողոտա հ.26 հասցեում բենզալցակայանի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տիգրան Հարությունյանի կողմից ներկայացված Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Մյասնիկյան պողոտա հ.26 հասցեում բենզալցակայանի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

13. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտասի պողոտայի և Վազգեն Ա Վեհափառի փողոցի մայթերի (երկկողմանի և ողջ երկայնքով) բարեկարգման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտասի պողոտայի և Վազգեն Ա Վեհափառի փողոցի մայթերի (երկկողմանի և ողջ երկայնքով) բարեկարգման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

14. Գույք նվիրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի վարչական տարածքում պետական և համայնքային բյուջեների միջոցներով և այլ աղբյուրների հաշվին կառուցված ջրամատակարարման, ջրահեռացման և հեղեղատար համակարգերը (այսուհետև գույք) նվիրել Հայաստանի Հանրապետությանը՝ համաձայն հավելվածի:

15. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N463-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2026 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ» N463-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6-րդ գլխի աղյուսակը լրացնել նոր՝ 9-50-րդ կետերով՝ համաձայն հավելվածի:

16. Փիրումյանների փողոցի հ.2/4 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Փիրումյանների փողոցի հ.2/4 հասցեում գտնվող Էդգար Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.13112023-01-0331 վկայական) 0.113377հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

17. Գ.Հովսեփյան փողոցին հարող տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցին հարող տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող հողամասի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.18082025-01-0062 վկայական, ծածկագիր՝ 01-009-0090-0239) 1.773հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «բնակավայրերի նշանակության» հողերի կատեգորիայից փոխադրել «անտառային» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

18. Գ. Հովսեփյան փողոցի հեռուստաաշտարակին հարող տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի հեռուստաաշտարակին հարող տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող հողամասի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.20062025-01-0292 վկայական, ծածկագիր՝ 01-009-0090-0762) 0.0358հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել անտառային հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

19. Մյասնիկյան պողոտա հ. 53/8 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի հաշվեկշռում գտնվող հ.19 քարշի ենթակայանի զբաղեցրած Մյասնիկյան պողոտա հ. 53/8 հասցեի 518.64քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «բնակավայրերի» հողերի կատեգորիայից փոփոխել «էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների և էներգետիկայի» հողերի կատեգորիայի:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

20. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Ոսկերիչների փողոցի հ.1 հասցեին կից գտնվող 900.0քմ մակերեսով հողամասի /ծածկագիր՝ 01-006-0720-0001/ նպատակային նշանակությունը բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

21. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Ա.Քոչինյան փողոցի հ. 15/1 հասցեում գտնվող Սուրեն Սամսոնյանին և Զինե Համզոյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 0.37432հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

22. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Մ.Սարյան փողոցի հ.36/5 հասցեում գտնվող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.13062025-01-0234 վկայական) 0.011781հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել էներգետիկայի,

տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

23. Երևան համայնքի սեփականություն համարվող Զաքարիա Քանաքեռցի փողոց հ. 54/6 շենքի հ. 6 բնակարանն անհատույց օտարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Զաքարիա Քանաքեռցի փողոց հ.54/6 շենքի հ.6 բնակարանն անհատույց սեփականության իրավունքով օտարել (նվիրել) Սամվել Եսայանին:

24. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N482-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան համայնքում 2026 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» N 482-Ն որոշման 1-ին կետում կատարել հետևյալ լրացումները.

1) 20-րդ ենթակետում «տերմինալների» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ շենքերի, շինությունների արտաքին պատերի վրա ամրացված և անիվների վրա գտնվող շարժական վճարային տերմինալների» բառերը.

2) 20-րդ ենթակետից հետո լրացնել նոր 20.1-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«20.1) Երևան համայնքի վարչական տարածքում շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով ծառայություններ մատուցելու նպատակով շենքերի, շինությունների արտաքին պատերի վրա ամրացված և անիվների վրա գտնվող շարժական վճարային տերմինալների տեղադրման թույլտվության համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, այն սահմանելով՝

ա. Արաբկիր վարչական շրջանի տարածքում՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ 10000 /տաս հազար/ դրամ՝ մեկ սարքավորման համար.

բ. Կենտրոն վարչական շրջանի տարածքում՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ 13000 /տասներեք հազար/ դրամ՝ մեկ սարքավորման համար.

գ. Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների տարածքներում՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ 8000 /ութ հազար/ դրամ՝ մեկ սարքավորման համար.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 482-Ն որոշման 1-ին կետում լրացվող նոր 20.1 ենթակետով նախատեսված կարգավորումները գործում են մինչև 2026 թվականի հուլիսի 31-ը ներառյալ:

25. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N249-Ն և Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 480-Ն որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի վարչական տարածքում առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտում գործունեության կանոնների կիրառման լրացուցիչ պայմանները և լրացուցիչ կանոններ սահմանելու մասին» N249-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 6-րդ կետում «թույլտվությունը համարվում է երկարաձգված՝ առանց սույն հավելվածով նշված ընթացակարգը կրկին անցնելու» բառերը փոխարինել «թույլտվությունը համարվում է երկարաձգված՝ առանց սույն հավելվածով նշված ընթացակարգը կրկին անցնելու, բացառությամբ, եթե տեղի է ունեցել սույն հավելվածով սահմանված պարտադիր պահանջների փոփոխություն և դրանց կիրառության մասով համապատասխան փոփոխությունը նախատեսող Երևան քաղաքի ավագանու որոշման անցումային դրույթներով այլ բան նախատեսված չէ».

2) 9-րդ կետում «բակային տարածքներում» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հավելվածի 10-րդ կետի 10-րդ ենթակետից մինչև 51-րդ ենթակետը ներառյալ նախատեսված փողոցներին հարող բակային տարածքների, որտեղ կարող են տեղադրվել միայն վճարային տերմինալներ և բանկոմատներ,» բառերը.

3) 10-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«10. Արգելվում է սարքավորումը տեղադրել ճանապարհի կամ փողոցի երթևեկելի մասում, պատմության և մշակույթի անշարժ հուշարձան շենքերի, շինությունների արտաքին պատերին կից հատվածներում և դրանց անմիջական կից մայթերին, դրանցից և Երևան քաղաքում տեղադրված հուշատախտակներից մինչև 10 մետր հեռավորության վրա, կանաչապատ գոտիներում, պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների շենքերի դիմաց, ինչպես նաև ստորև նշված տարածքների կառուցապատման գծերից դուրս հատվածներում՝ բացառությամբ կանգառասրահներում և դրանցից մինչև 10 մետր հեռավորության վրա ծառայություններ մատուցող բանկոմատների և վճարային տերմինալների.

1) Կիևյան փողոց,

2) Վազգեն Առաջին Վեհափառի փողոց,

3) Կոմիտասի պողոտա,

4) Մ. Բաղրամյան պողոտայի՝ Պռոշյան և Հրաչյա Քոչար, Կիևյան փողոցների միջև ընկած հատված,

5) Վ. Դավթյանի անվան այգի և դրան անմիջական կից մայթեր,

6) Մերգելյանի անվան այգի և դրան անմիջական կից մայթեր,

7) Էրեբունի փողոց,

8) Տիտոգրադյան փողոց,

9) Տ. Մեծի պողոտայի՝ Քրիստափոր-Սասունցի Դավիթ փողոցների միջև ընկած հատված,

10) Աբովյան փողոց,

11) Ամիրյան փողոց,

12) Արամի փողոց,

13) Ա. Թամանյան փողոց,

14) Բեյրութի փողոց,

15) Իտալիայի փողոց,

16) Հ. Թումանյան փողոց,

17) Բայրոնի փողոց,

18) Մարկ Գրիգորյան փողոց,

19) Հանրապետության փողոց,

20) Տպագրիչների փողոց,

21) Հյուսիսային պողոտա,

22) Հին Երևանցու փողոց,

23) Մելիք Ադամյան փողոց,

24) Ղ. Փարպեցու փողոց,

25) Եզ. Կողբացու փողոց,

26) Մ. Մաշտոցի պողոտա,

27) Միեր Մկրտչյան փողոց,

28) Նալբանդյան փողոց,

29) Սայաթ-Նովա պողոտա,

30) Վ. Սարգսյան փողոց,

31) Փ. Բուզանդի փողոց,

32) Զաքյան փողոց,

33) Զառուբյան փողոց,

34) Սարմենի փողոց,

35) Ավագ Պետրոսյան փողոց,

36) Աղայան փողոց,

37) Քոչինյան փողոց,

38) Սպենդիարյան փողոց,

39) Դեմիրճյան փողոց,

40) Պարոնյան փողոց,

41) Ֆրիկի փողոց,

42) Մոսկովյան փողոց,

43) Մ. Սարյան փողոց,

44) Իսահակյան փողոց,

45) Մ. Բաղրամյան պողոտայի՝ Մոսկովյան և Պռոշյան փողոցների միջև ընկած հատված,

46) Մ. Խորենացու փողոցի՝ Մ. Մաշտոցի պողոտայի և Միեր Մկրտչյան փողոցի միջև ընկած հատված,

47) Վարդանանց փողոցի՝ Նալբանդյան և Ալեք Մանուկյան փողոցների միջև ընկած հատված,

48) Տերյան փողոցի՝ Արամ և Կորյուն փողոցների միջև ընկած հատված,

49) Տ. Մեծի պողոտայի՝ Հանրապետության հրապարակի և Խանջյան ու Ագաթանգեղոսի փողոցների միջև ընկած հատված,

50) Ագաթանգեղոսի փողոցի՝ Տ. Մեծի պողոտայի և Մ. Խորենացու փողոցի միջև ընկած հատված,

51) Գլխավոր պողոտայի՝ Նալբանդյան և Խանջյան փողոցների միջև ընկած հատված,

52) Մարտիրոս Սարյանի անվան պուրակ և դրան անմիջական կից մայթեր,

53) Մ. Մաշտոցի և Սայաթ-Նովա պողոտաների ու Մոսկովյան փողոցի միջև ընկած այգի,

54) Կոմիտասի անվան պուրակ և դրան անմիջական կից մայթեր,

55) Շահումյանի անվան պուրակ և դրան անմիջական կից մայթեր,

56) Ֆրանսիայի հրապարակ և դրան անմիջական կից մայթեր,

57) Օղակաձև զբոսայգի և դրան անմիջական կից մայթեր,

58) Մանկական այգի և և դրան անմիջական կից մայթեր,

59) Անգլիական այգի և դրան անմիջական կից մայթեր,

60) Սիրահարների այգի և դրան անմիջական կից մայթեր,

61) Երևանի 2800-ամյակի այգի և դրան անմիջական կից մայթեր,

62) Միսաք Մանուշյանի անվան պուրակ և դրան անմիջական կից մայթեր,

63) Հանրապետության հրապարակ և դրան անմիջական կից մայթեր,

64) Ազատության հրապարակ և դրան անմիջական կից մայթեր,

65) Գայի պողոտա,

66) Գայի պողոտայի շատրվանների այգի և դրան անմիջական կից մայթեր,

67) Թաթուլ Կրպեյանի անվան զբոսայգի և դրան անմիջական կից մայթեր,

68) Նոր Նորքի Սուրբ Սարգիս եկեղեցու այգի և դրան անմիջական կից մայթեր,

69) Վերածննդի այգի և դրան անմիջական կից մայթեր,

70) Տ. Մեծի անվան այգի և դրան անմիջական կից մայթեր,

71) Ֆ. Նանսենի անվան այգի և դրան անմիջական կից մայթեր:».

4) 10-րդ կետից հետո լրացնել նոր 10.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«10.1. Արգելվում է Երևան համայնքի վարչական տարածքում շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու նպատակով անիվների վրա գտնվող շարժական վճարային տերմինալների տեղադրումը, բացառությամբ այն դեպքերի, եթե դրանց միջոցով առևտուր իրականացվելու կամ ծառայություններ մատուցվելու է միայն

ցերեկային ժամերին: Սույն կետի իմաստով ցերեկային ժամ է համարվում 08.00-ից 23.00-ն ընկած ժամանակահատվածը:»:

2. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 249-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 480-Ն որոշման 2-րդ կետում «թույլտվություն ստացած սուբյեկտների մասով» բառերը փոխարինել «թույլտվություն ստացած սուբյեկտներին տրված և գործող թույլտվության մասով» բառերով, իսկ «սուբյեկտների համար» բառերը փոխարինել «սուբյեկտներին տրված և գործող թույլտվության մասով» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի հունվարի 1-ը թույլտվություն ստացած սուբյեկտներին տրված և գործող թույլտվության մասով սույն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված կարգավորումների գործողությունները տարածվելու են 2027 թվականի հունվարի 1-ից: Մինչև 2027 թվականի հունվարի 1-ը սույն կետում նշված սուբյեկտներին տրված և գործող թույլտվության մասով գործելու են մինչև Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 480-Ն որոշումն ուժի մեջ մտնելը Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 249-Ն որոշման հավելվածի 9-րդ և 10-րդ կետերով նախատեսված պահանջները:

5. 2026 թվականի հունվարի 1-ից մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը թույլտվություն ստացած սուբյեկտներին տրված և գործող թույլտվության մասով սույն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված կարգավորումների գործողությունները տարածվելու են 2027 թվականի հունվարի 1-ից: Մինչև 2027 թվականի հունվարի 1-ը սույն կետում նշված սուբյեկտներին տրված և գործող թույլտվության մասով գործելու են մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը գործող Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 249-Ն որոշման հավելվածի 9-րդ և 10-րդ կետերով նախատեսված պահանջները:

26. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N718-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի «Երևան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին» N 718-Ն որոշման հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 3-6-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Թույլտվություն ստանալու համար դիմումատուն Երևանի քաղաքապետին ներկայացնում է էլեկտրոնային եղանակով դիմում՝ www.dimum.yerevan.am առցանց հարթակի միջոցով, որին կից ներկայացվում են.

1) անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման քաղվածքը,

2) շենքի կամ շինության սեփականության կամ օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը,

3) տեղական տուրքի վճարման անդորրագրի պատճենը,

4) ճարտարապետա-գեղարվեստական նախագծային առաջարկ՝ սույն հավելվածի 3-րդ գլխում սահմանված պահանջներին համապատասխան,

5) ընթացիկ տարվա համար Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N 48-Ն որոշմամբ սահմանված պարտադիր բարեկարգման պահանջների կատարման վերաբերյալ Տարածքի բարեկարգման համաձայնեցված նախագիծը:

4. Դիմումների վերաբերյալ սահմանված կարգով և 3 աշխատանքային օրում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչություն եզրակացություն են ներկայացնում Երևանի համապատասխան վարչական շրջանի ղեկավարը՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների առկայության և Երևան համայնքի նկատմամբ չկատարված պարտավորությունների վերաբերյալ, իսկ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունը՝ սույն հավելվածի 8-16-րդ կետերով սահմանված պահանջների կատարման մասին:

5. Եթե թույլտվությունը ստանալուց հետո սույն հավելվածի 3-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերի փոփոխություններ չեն կատարվել, ապա հաջորդ տարիներին տվյալ սեզոնի դիմումի վերաբերյալ սույն հավելվածի 4-րդ կետով նշված ստորաբաժանումների կողմից եզրակացություններ չեն տրամադրվում, իսկ դիմումին կից ներկայացվում են միայն տեղական տուրքի վճարման անդորրագրի պատճենը, ընթացիկ տարվա համար Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N48-Ն որոշմամբ սահմանված պարտադիր բարեկարգման պահանջների կատարման վերաբերյալ Տարածքի բարեկարգման համաձայնեցված նախագիծը:

6. Դիմումը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում, բացառությամբ եթե պատմության և մշակույթի անշարժ հուշարձան շենքի դեպքուում Երևանի քաղաքապետարանի կողմից ճարտարապետա-գեղարվեստական նախագծային առաջարկն ուղարկվել է պետական լիազոր մարմին՝ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով, որի դեպքում դիմումը քննարկվում է 30 օրվա ընթացքում, էլեկտրոնային եղանակով դիմումատուին տրվում է համապատասխան թույլտվություն կամ դիմումը մերժվում է: Դիմումը մերժվում է եթե՝

1) սույն կարգի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացվել են թերի (այդ թվում՝ տեղական տուրքի գումարը վճարվել է Երևան համայնքի ավագանու որոշմամբ սահմանված դրույքաչափից պակաս) և դրա մասին դիմումատուին տեղեկացնելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս կողմից դրանք չեն համալրվել,

2) սույն կարգի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացվել են ամբողջական, սակայն դրանք չեն համապատասխանում սույն հավելվածով սահմանված պահանջներին,

3) գործունեության իրականացման վայրի շենքը կամ շինությունը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ տվյալ գործունեությամբ զբաղվելու համար նախատեսված պահանջներին, ինչի վերաբերյալ պետական լիազոր մարմնի (մարմինների) կողմից ստացվել է համապատասխան տեղեկատվություն,

4) սույն հավելվածի 4-րդ կետով նշված մարմինների կամ պատմության և մշակույթի անշարժ հուշարձան շենքի դեպքում ճարտարապետա-գեղարվեստական նախագծային առաջարկի վերաբերյալ պետական լիազոր մարմնի կողմից ստացվել է բացասական եզրակացություն:»:

2. Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշման 1-ին կետն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է սույն որոշման 1-ին կետն ուժի մեջ մտնելուց հետո թույլտվություն ստանալու համար ներկայացվող դիմումների վրա:

4. Սույն որոշման 2-րդ կետն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:

27. «ԱՐԻԱՆ ՄՈԹՈՐՍ» ՍՊ ընկերության կողմից Երևանի քաղաքապետարան ներկայացված ներդրումային ծրագրին հավանություն տալու, ներդրումային ծրագրով նախատեսված և կառուցված անշարժ գույքից 4018.3 քմ մակերեսով տարածքը և անշարժ գույքի զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի համապատասխան բաժնեմաս նվիրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հավանություն տալ «ԱՐԻԱՆ ՄՈԹՈՐՍ» ՍՊ ընկերության կողմից Երևանի քաղաքապետարան ներկայացված ներդրումային ծրագրին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետով հավանության արժանած ներդրումային առաջարկի շրջանակներում ներդրումային ծրագրով նախատեսված և կառուցված անշարժ գույքից 4018. 3 քմ մակերեսով տարածքը և անշարժ գույքի զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի համապատասխան բաժնեմասը նվիրել «ԱՐԻԱՆ ՄՈԹՈՐՍ» ՍՊ ընկերությանը:

3. Երևանի քաղաքապետին՝

1) սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում ապահովել ներդրումային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ հողամասի առանձնացման և իրավունքների պետական գրանցման աշխատանքների իրականացումը,

2) սույն որոշման 1-ին կետով հավանության արժանած ներդրումային առաջարկի շրջանակներում ներդրումային ծրագրով նախատեսված և կառուցված անշարժ գույքի նկատմամբ Երևան համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո երկու ամսվա ընթացքում ապահովել սույն որոշման 2-րդ կետով նախատեսված տարածքի և հողամասի համապատասխան բաժնեմասի նվիրատվության պայմանագրի կնքումը:

28. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N481-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին» N 481-Ն որոշման 6-րդ կետից հետո լրացնել նոր 6.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.1. Ավարտված շինարարական օբյեկտի՝ հաստատված նախագծին և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխանությունը հավաստելու նպատակով ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողովի ակտը ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի անդամների առնվազն կեսի կողմից ստորագրված լինելու դեպքում շինարարության թույլտվության ժամկետների, անկախ Երևան քաղաքի ավագանու որոշումներով սահմանված արտոնությունների կիրառմամբ շինարարության թույլտվության ժամկետը արդեն իսկ երկարաձգված լինելու դեպքերի, մինչև 1 ամիս ժամկետով երկարաձգման համար 2026 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) Երևան համայնքի հանդեպ թույլտվության ժամկետի երկարաձգման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ:»:

29. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N690-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ –Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Երևան քաղաքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ սահմանելու կարգը սահմանելու մասին» N690-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) 1-ին կետից հետո լրացնել նոր 1.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Սույն կարգի իմաստով անշարժ գույքի հարկ և փոխադրամիջոցի գույքահարկ են համարվում նաև մինչև Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի ուժի մեջ մտնելը գործող «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» օրենքների հիման վրա հաշվարկված գույքահարկը և հողի հարկը:».

2) 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Երևան քաղաքի ավագանին անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն է սահմանում առանձին հարկ վճարողների համար Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող (հաշվառված), անշարժ գույքի հարկով և փոխադրամիջոցի գույքահարկով (այդ թվում՝ գույքահարկով ու հողի հարկով) հարկման օբյեկտ հանդիսացող գույքի (ներառյալ՝ հողի) մասով՝ արտոնության վերապահման տարվա համայնքի բյուջեի հաստատումից հետո: Սույն կետին համապատասխան՝ համայնքի ավագանու սահմանած անշարժ գույքի հարկի գծով արտոնության գումարը չի կարող գերազանցել տվյալ հարկային տարվա համար անշարժ գույքի հարկի գծով

համայնքի բյուջեի հաստատված եկամուտների տասը տոկոսը, իսկ փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտոնության գումարը՝ տվյալ հարկային տարվա համար փոխադրամիջոցների գույքահարկի գծով համայնքի բյուջեի հաստատված եկամուտների տասը տոկոսը:».

3) 3.3-րդ կետից հետո լրացնել նոր 3.4-րդ և 3.5-րդ կետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.4. Անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի գծով արտոնություններ կարող են սահմանվել նաև՝

1) Երևան քաղաքի վարչական տարածքում սեփականության իրավունքով ֆիզիկական անձանց պատկանող, գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող բնակելի նշանակության շենքերի, շինությունների և փոխադրամիջոցների գույքահարկի մինչև 2018 թվականը ներառյալ հարկը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով հաշվարկված և չվճարված տույժերի մասով, եթե առկա չեն գույքահարկի մինչև 2018 թվականը ներառյալ հաշվարկված հարկի (ապառքի) մասով պարտավորություններ.

2) Երևան քաղաքի վարչական տարածքում սեփականության իրավունքով ֆիզիկական անձանց պատկանող, հողի հարկով հարկման օբյեկտ հանդիսացող հողերի մինչև 2018 թվականը ներառյալ հարկը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով հաշվարկված և չվճարված տույժերի մասով, եթե առկա չեն հողի հարկի մինչև 2018 թվականը ներառյալ հաշվարկված հարկի (ապառքի) մասով պարտավորություններ.

3) Երևան քաղաքի վարչական տարածքում ֆիզիկական անձանց անվամբ գրանցված և մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ օտարված և օտարող ֆիզիկական անձի սեփականության իրավունքի դադարումը պետական լիազոր մարմնի կողմից գրանցված փոխադրամիջոցների մասով հաշվարկված և չվճարված հարկի (ապառքի) և հարկը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով հաշվարկված և չվճարված տույժերի մասով:

3.5. Սույն կարգի 3.4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված արտոնությունները կարող են կիրառվել, եթե նույն ենթակետերով սահմանված հարկի (ապառքի) մասով պարտավորությունները կատարվել են մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:»:

4) 4-րդ կետում «բացառությամբ սույն կարգի 3.1-ին և 3.2-րդ կետերով» բառերը փոխարինել «բացառությամբ սույն կարգի 3.1-ին, 3.2-րդ և 3.4-րդ կետերով» բառերով.

5) 8-րդ կետում «բացառությամբ սույն կարգի 3.1-ին և 3.2-րդ կետերով» բառերը փոխարինել «բացառությամբ սույն կարգի 3.1-ին, 3.2-րդ և 3.4-րդ կետերով» բառերով.

6) 9-րդ կետում «3.1-ին կետով» բառերը փոխարինել «3.1-ին և 3.4-րդ կետերով» բառերով.

7) 13-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերում «բացառությամբ սույն կարգի 3.1-ին և 3.2-րդ կետերով նախատեսված արտոնությունների տրամադրման դեպքերի» բառերը փոխարինել «բացառությամբ սույն կարգի 3.1-ին, 3.2-րդ և 3.4-րդ կետերով նախատեսված արտոնությունների տրամադրման դեպքերի, եթե արտոնությունը սահմանվում է Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ» բառերով:

30. Երևան քաղաքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ սահմանելու և համայնքի բյուջեից վճարում կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի վարչական տարածքում սեփականության իրավունքով ֆիզիկական անձանց պատկանող, գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող բնակելի նշանակության շենքերի, շինությունների և փոխադրամիջոցների գույքահարկի մինչև 2018 թվականը ներառյալ հարկը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով հաշվարկված և չվճարված տույժերի մասով սահմանել արտոնություն՝ հարկ վճարողին ազատելով սահմանված կարգով հաշվարկված և չվճարված տույժերից, եթե առկա չեն գույքահարկի մինչև 2018 թվականը ներառյալ հաշվարկված հարկի (ապառքի) մասով պարտավորություններ:

2. Երևան քաղաքի վարչական տարածքում սեփականության իրավունքով ֆիզիկական անձանց պատկանող, հողի հարկով հարկման օբյեկտ հանդիսացող հողերի մինչև 2018 թվականը ներառյալ հարկը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով հաշվարկված և չվճարված տույժերի մասով սահմանել արտոնություն՝ հարկ վճարողին ազատելով սահմանված կարգով հաշվարկված և չվճարված տույժերից, եթե առկա չեն հողի հարկի մինչև 2018 թվականը ներառյալ հաշվարկված հարկի (ապառքի) մասով պարտավորություններ:

3. Երևան քաղաքի վարչական տարածքում ֆիզիկական անձանց անվամբ գրանցված և մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ օտարված և օտարող ֆիզիկական անձի սեփականության իրավունքի դադարումը պետական լիազոր մարմնի կողմից գրանցված փոխադրամիջոցների մասով հաշվարկված և չվճարված հարկի (ապառքի) և հարկը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով հաշվարկված և չվճարված տույժերի մասով սահմանել արտոնություն՝ հարկ վճարողին ազատելով հաշվարկված և չվճարված հարկային պարտավորությունների և հաշվարկված և չվճարված տույժերի վճարումից:

4. Սահմանել, որ սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով նախատեսված արտոնությունները համարվում են տրամադրված, եթե նույն կետերով սահմանված հարկի (ապառքի) մասով հարկային պարտավորությունները կատարվել են մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ և պարտավորությունների կատարումը հիմնավորող փաստաթղթերը հարկ վճարողի կողմից ներկայացվել են Երևանի քաղաքապետին:

5. Առաջարկել Երևանի քաղաքապետին սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում արտոնությունը համարել տրամադրված և հարկ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից վճարում կատարել միայն հարկ վճարողի կողմից սույն որոշմամբ նախատեսված արտոնությունների կիրառման համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները Երևանի քաղաքապետին ներկայացնելու դեպքում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 690-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու 2026 թվականի ապրիլի 21-ի N 549-Ն որոշումն ուժի մեջ մտնելու օրը:

31. Աղբահանության վճարի նկատմամբ հաշվարկված տույժերի վճարման պարտականությունից ազատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի վարչական տարածքում բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում բնակվող յուրաքանչյուր բնակչի հաշվով մինչև 2018 թվականը ներառյալ հաշվարկված աղբահանության վճարը «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքով սահմանված ժամկետներում չվճարած ֆիզիկական անձանց (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերերին և արտոնագրային վճար վճարողներին) ազատել սահմանված ժամկետներում աղբահանության վճարը չվճարելու հետևանքով հաշվարկված և չվճարված տույժերի վճարման պարտականությունից, եթե աղբահանության վճար վճարողը մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ Երևանի քաղաքապետին ներկայացրել է դիմում՝ հաշվարկված տույժերի վճարման պարտականությունից ազատելու վերաբերյալ, և դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ աղբահանության վճար վճարողը չունի մինչև 2018 թվականը ներառյալ հաշվարկված աղբահանության վճարի (ապառքի) գծով պարտավորություններ:

32. Երևան քաղաքի Տիտոգրադյան փողոցն անվանափոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Տիտոգրադյան փողոցն (սկսվում է Այվազովսկու փողոցի կենտրոնական հատվածից, հասնում Խաղաղ Դոնի փողոց) անվանափոխել Պոդգորիցա անվամբ՝ «Պոդգորիցայի փողոց»:

33. Երևան քաղաքում Կոստան Զարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասի 1-ին փողոցն (սկսվում է Սիլիկյան հին խճուղուց, հասնում մինչև հ.89/1 հասցեի հարակից տարածք) անվանակոչել գրող, բանաստեղծ, արձակագիր Կոստան Զարյանի անվամբ՝ «Կոստան Զարյան փողոց»:

34. Երևան քաղաքում Մխիթար Սեբաստացու անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասի 2-րդ փողոցն (զուգահեռ է 1-ին փողոցին) անվանակոչել հայ կաթոլիկ եկեղեցական գործիչ, հայագետ, Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստացու անվամբ՝ «Մխիթար Սեբաստացու փողոց»:

35. Երևան քաղաքում Աշոտ Սաթյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան 9-րդ փողոցը (սկսվում է Սիլիկյան 9-րդ փողոցի հ 17 հասցեից, հասնում՝ Երևանի հ.37 մանկապարտեզի հարակից տարածք) անվանակոչել հայ խորհրդային կոմպոզիտոր և դիրիժոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Աշոտ Սաթյանի անվամբ՝ «Աշոտ Սաթյան փողոց»:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 38, դեմ՝ 12, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ այժմ քննարկման է ներկայացվում 2026 թվականի ապրիլի 21-ի հերթական նիստի զեկուցվող հարցերը.

36. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՅՑԵՑ–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը:

«Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տ. Ավինյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 11 անդամ.

1. Արման Բաբաջանյան – Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ,
2. Իզաբելլա Աբգարյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
3. Պեդրո Զարոկյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
4. Վահան Ավագյան – Երևանի ավագանու «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար,
5. Տիգրան Պետրոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
6. Մարատ Թոխյան – Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ,
7. Դիանա Քերոբյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ,
8. Իոսիֆ Կուբատյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
9. Արամ Թորոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար,
10. Հայկ Գրիգորյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,

11. Ալբերտ Մովսեսյան – Երևանի ավագանու անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը, քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը և քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել է ավագանու 8 անդամ.

1. Արմենակ Դանիելյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ,
2. Մեսրոպ Մանուկյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ,
3. Իզաբելլա Աբգարյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
4. Պեդրո Զարոկյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
5. Արշակ Սարգսյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ,
6. Սարգիս Տեր-Եսայան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ,
7. Արամ Թորոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար,
8. Մանուկ Սուքիասյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար:

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության անդամ Նատալյա Սինորյանը:

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 483-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-5 հավելվածների:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 40, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 16

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

37. Երևան քաղաքում փողոց անվանափոխելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան քաղաքում փողոց անվանափոխելու մասին» նախագծի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՅՑԵՑ–Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Պեդրո Զարոկյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
2. Տիգրան Պետրոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
3. Լինա Ղշյան – Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ,
4. Ալբերտ Մովսեսյան – Երևանի ավագանու անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել է ավագանու 8 անդամ.

1. Հայկ Սահակյան - Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ,
2. Անի Խաչատրյան - Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության ղեկավար,
3. Վահան Ավագյան – Երևանի ավագանու «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար,
4. Արամ Թորոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար,
5. Գոհար Բալդրյան - Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ,
6. Միեր Բեջանյան - Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ,
7. Մանուկ Սուքիասյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար,
8. Սուսաննա Մելիքյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ:

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը:

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 17-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանի կողմից պահանջվեց մինչև քվեարկության անցկացումը, հայտարարել տասնհինգ րոպե ընդմիջում:

Ընդմիջում:

Նիստը վերսկսվեց ժամը 12.50-ին:

Հիմք ընդունելով նիստին ներկա ավագանու անդամների թվաքանակը, Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ քվորում չկա և հայտարարեց երեսուն րոպե ընդմիջում:

Ընդմիջում:

Նիստը վերսկսվեց ժամը 14.00-ին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ հիմք ընդունելով նիստին ներկա ավագանու անդամների թվաքանակը, կրկին անգամ քվորում չկա:

Հաշվի առնելով վերոգրյալը, Երևանի ավագանու 2026թ. ապրիլի 21-ի նիստն ավարտվեց:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմեց
Ն. Ղուկասյանը